

բեանց ոչ հաւանեալս թողեալ էին Հոռոմոց .
 զի քաղաքն Հոռոմոց էր նախ :

400

Եւ կայր հարիւր կամ աւելի Հոռոմոց
 եկեղեցի . իսկ Տաճկաց մզկիթ, մէջիթ քանի
 հազար . նոյնպէս բաղնիք, խաներ զարմա-
 նաշէն մեծ եւ լայնանիստք, կամարակապ,
 մեծամեծ սայլիւք, եւ մարմարէ խարսխօք ⁴⁰⁵
 հաստատեալ . դռվին մեծ երկաթի որպէս
 քաղաքին : Կայ խան, որ հարիւր օտա ունի .
 կայ երկու հարիւր, կայ որ երեքհարիւր, եւ
 մէջն շատրվանի եւ ջրեր քաղցրահամ : Նոյն-
 պէս եւ բաղանիքն մեծամեծք, զմզէթայարկ ⁴¹⁰
 խոււպայիւք իբրեւ զեկեղեցիս . ոմն մարմարէ
 սպիտակ, ոմն խէտուճէտ քարանց, այլքն
 շինի սաֆի պատերն, եւ այլքն այլ իմն :
 Շատրվանք ջրոց եւ դռներ ի նմա յուրվ :
 Սպասաւորք քանի հարիւր ի նմա . նոյնպէս ⁴¹⁵
 փէշամանի, մախրամանի, սրբիչք եւ
 խզմէթնի որպէս մարդ կամի կամ հաճի : Եւ
 ամէն Աստուծոյ օր կու վառի . եւ թէ մարդ
 ամէն օր զնայ ի նա՝ ա՛յլ կ'ուզէ :

ԵՏԻ ՂՈՒԱ

Եւ այլ բազում շէնք եւ եարուք տեսաք ⁴²⁰
 զարմանալիք՝ հին եւ նոր : Նաեւ սարայնի
 վէշիրնուն, փաշանուն, եւ այլ մեծամեծ ա-
 զայից, զայիմուն եւ իշխանաց, որ թագա-
 ւորաց լայեխ էր :